# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19.12.2012թ.

ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 94 -ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Ադամյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

## ՕՐԱԿԱՐԳ

***1.*** Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով իրականացված աշխատանքների մասին:

*/ Զեկ'.քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյան/*

***2.*** Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարվող աշխատանքների մասին:

*/Զեկ'. կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյան/*

***3.*** Մարզի համայնքների 2012թ. 11 ամիսների բյուջեների կատարման մասին

*/Զեկ'. Ֆին. և սոցիալ-տնտ. զարգ. վարչ. պետ Գ. Եղիազարյան/*

**4.**Գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին :

/Զեկ՝ գյուղ. և բնապահպ. վարչ.պետ Տ. Վիրաբյան/

***5.*** **Այլ հարցեր՝**

- Նախադպրոցական կազմակերպությունների ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն:

/հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարզային կենտրոնի պետ Ա. Սարգսյան/

***1. Լսեցին՝***

Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով իրականացված աշխատանքների մասին վարչության պետ Ռ. Մկրտչյանի զեկուցումը:

/կցվում է/

***Արտահայտվեց*** մարզպետ Է. Բարսեղյանը:

***2.Լսեցին՝***

Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարվող աշխատանքների մասին վարչության պետ Ա. Հակոբյանի զեկուցումը:

/կցվում է/

***Արտահայտվեց*** մարզպետ Է. Բարսեղյանը:

***Հանձնարարվեց*** մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին՝

1. Կազմել հանձնաժողով, անցկացնել ուդիտ՝ մարզի մանկապարտեզներում վերանորոգման, սանիտարահիգիենիկ, ջրամատակարարման, գույքի ձեռք բերման հետ կապված և 2013թ. մարտ ամսին ներկայացնել հաշվետվություն:

2. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյանին՝

Մինչև 2013թ. փետրվարի 1-ը անցկացնել մանկապարտեզների տնօրենների խորհրդակցություն:

***3. Լսեցին՝***

Մարզի համայնքների 2012թ. 11 ամիսների բյուջեների կատարման մասին մարզպետի տեղակալ Ս. Մինասյանի զեկուցումը:

/ կցվում է/

***Արտահայտվեց*** մարզպետ Է. Բարսեղյանը:

***Հանձնարարվեց*** համայնքների ղեկավարներին՝ մինչև ընթացիկ տարվա ավարտը բյուջեի կատարումը հասցնել 100%- ի:

***4. Լսեցին՝***

Գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին վարչության պետ Տ. Վիրաբյանի զեկուցումը:

/կցվում է/

***Արտահայտվեց*** մարզպետ Է. Բարսեղյանը:

**5. Այլ հարցեր՝**

Նախադպրոցական կազմակերպությունների ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրեց հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարզային կենտրոնի պետ Ա. Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ